սկիզբ
beginning
end
beginning
վերջ
սկիզբ
Կարեն
Պետրոսյան
Garen Bedrossian
CAFESJIAN
CENTER FOR THE ARTS
2023
Երևան I Yerevan

սկիզբ, վերջ, սկիզբ

«Մարդը բնության մաս է, ոչ թե բնությանը հակադրվող երևույթ: Նրա մտքերն ու մարմնի շարժումները հետևում են նույն օրենքներին, որոնցով նկարագրվում են աստղերի ու ատոմների շարժումները»,- այսպես էր ներկայացնում մարդու ու բնության հարաբերությունը բրիտանացի մեծանուն մաթեմատիկոս և փիլիսոփա Բերտրան Ռասելը (1872-1970) շուրջ մեկ դար առաջ[1]: Այդուհանդերձ, բնության մասնիկ ու ծնունդ լինելով՝ մարդը մշտապես անվերջանալի պայքարի մեջ է նրա հետ, ասել է թե՝ ինքն իր հետ:

Բնությունը, փիլիսոփայական տեսանկյունից, որպես հասկացություն կարելի է ընկալել երկու իմաստով՝ առավել ընդարձակ և ավելի նեղ: Լայն իմաստով, բնությունը գոյության հիմնական ձևն է, ամբողջ բազմաշերտ ու բազմազան աշխարհը, որ շրջապատում է մեզ դեռևս մարդու հայտնվելուց առաջ ու այժմ գոյակցում է նրա հետ: Այն հավերժ է ու կլինի մեր վերանալուց հետո էլ. բնությունից (ամենալայն իմաստով) անդին որևէ բան գոյություն չունի: Ավելի նեղ իմաստով բնությունը մարդու բնական միջավայրն է, որն ուսումնասիրվում, ընկալվում և սպառվում է հասարակության կողմից իր կենսագործունեության համար:

Կանադաբնակ հայազգի արվեստագետ Կարեն Պետրոսյանն (ծնվ. 1952 թ.) իր արվեստում արդեն մի քանի տասնամյակ ուսումնասիրում է մարդու և բնության հարաբերությունները տարբեր հարթություններում՝ կենսաբանական, փիլիսոփայական, տիեզերական, մետաֆիզիկական և այլն: Այս ամենով հանդերձ, մարդը նրա ստեղծագործություններում կենտրոնական տեղ է գրավում և նրա աշխատանքները կառուցված են մարդու շուրջ: Ուստի, զարմանալի չէ, որ արվեստագետը նույնիսկ առանձին շարքով դիտարկում է «միկրոկոսմ-մակրոկոսմ»-ի գաղափարը՝ հղում անելով մարդու և կոսմոսի (տիեզերքի) համեմատության ու ընդհանրության փիլիսոփայական մոդելին: Նրա արվեստում մարդը և բնությունը չեն դիտարկվում առանձին-առանձին, որոշակի վակուումի մեջ, այլ հենց միմյանց հետ հարաբերության խոսույթում են գտնվում:

1 Russell, B. (2004). What I Believe (2nd ed.), Routledge Classics, London, էջ 20:



Ճանապարհ
Path
2022

Շերտեր 2
Layers 2
2022

Զրույց
Conversation
2006